

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մարտի 2-ին, կիրակի.—Դ կիրակի Քառասնորդական Պահոց (Տնտեսին).

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Պսակ աբեղա Կարապետյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 9-ին, կիրակի.—Ե կիրակի Քառասնորդական Պահոց (Դատաւորին).

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի մասին քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ժնևի հայոց հոգևոր հովիվ Տ. Վիգեն վրդ. Այքալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 12-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Մարտի 15-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:

Այսօր Մայր տաճարում, Իշման ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

*
* *

Մարտի 16-ին, կիրակի.—Զ կիրակի Քառասնորդական Պահոց (Գալատեան).

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղրաս աբեղա Ներսիսյանը:

«Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի մասին քարոզ խոսեց Տ. Պսակ աբեղա Կարապետյանը:

*
* *

Մարտի 19-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Մարտի 23-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց՝ «Օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի. խաղաղութիւն յերկինս եւ փառք ի բարձունս» (Մարկոս ԺԱ 10) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, հանդիսավոր ժամերգությունից հետո, Մայր տաճարի Ավագ խորանի վրա տեղի ունեցավ «Դռնբացէք»-ի հանդիսավոր և հոգեպարար արարողությունը:

*
* *

Մարտի 27-ին, հինգշաբթի.—Աւագ հինգշաբթի. Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, «միջօրէի» ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը:

Ս. պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը ընթերցեց Սուրբ Բարսեղ Հայրապետի մեծ ճառը:

Երեկոյան ժամը 17.30-ին Մայր տաճարում ավանդական հանդիսավորությամբ կատարվեց «Ոտնալուայ»-ի կարգը՝ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոսի հանդիսադրությամբ:

Հանդիսավոր արարողությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ժամը 19.30-ին «ի գիշերի հսկումն» կատարվեց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

«Փառք ի բարձունս»-ից հետո օրվա խորհրդի մասին խորիմաստ քարոզ խոսեց Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը՝ «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս» (Մարկոս ԺԵ 34) բնաբանով:

*
* *

Մարտի 28-ին, ուրբաթ.—Աւագ ուրբաթ. Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր, ժամը 11.30-ին, Մայր տաճարում կատարվեց «Կարգ Խաչելութեան» արարողությունը:

Երեկոյան ժամը 18.30-ին, հանդիսադրությամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանի, Մայր տաճարի շուրջ կատարվեց «Կարգ թաղման» արարողությունը՝ եկեղեցական հանդիսավոր թափորով:

*
* *

Մարտի 29-ին, շաբաթ.—Աւագ շաբաթ, Ճրագալոյց Զատկի.

Այսօր, ժամը 18-ին, Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը: Ընթացս ս. պատարագի հանդիսավորությամբ հնչեց Հարության մեծ ավետիսը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ժամը 20.30-ին վանական սեղանատանը Մայր Աթոռի միաբանները և հոգևոր ճեմարանի ուսանողությունը ճաշակեցին Զատկի նավակատիքի ընթրիքը:

*
* *

Մարտի 30-ին, կիրակի.—Ս. Զատիկ (տես առանձին):

*
* *

Մարտի 31-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Ապրիլի 6-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր Կիւրակէ):

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ մատուցեց Տ. Պսակ աբեղա Կարապետյանը:

«Հայր մեր»-ից՝ առաջ հայր սուրբը քարոզ խոսեց՝ «Չէ աստ, քանզի յարեաւ» (Մատթ. ԻԸ 6) բնաբանով:

*
* *

Ապրիլի 13-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ Կիւրակէ):

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի ոգեշունչ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես եպս. Պոլապայանը:

*
* *

Ապրիլի 20-ին, կիրակի.—Կարմիր Կիւրակէ:

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը քարոզ խոսեց՝ «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 28) բնաբանով:

Իր քարոզի մեջ հայր սուրբը ի մասնավորի ասաց. «40-օրյա շրջանը հիշատակությունն է Հիսուսի Հրաշափառ Հարությունից հետո երկրի վրա ապրած 40 օրերի, մինչև նրա Համբարձումը փառքի բարձունքներ: Երբ Հիսուս վախճանվեց խաչի վրա, անարգվեց և ստորացուցիչ կերպով խաչվեց ավազակների հետ՝ թերահավատությունը կուրացրեց աշակերտներին՝ տեսնելու մարգարեությունը: Սակայն Հարության ավետաբեր լույսը ցրեց նրանց հոգու թանձր խավարը, հոգեկան խռովքը փոխվեց ցնծության: Եվ նորից համախմբվեց Բարի Հովվի ցրված հոտը, այս անգամ արդեն անմնացորդ հավատքով և հավատարմությամբ»:

*
* *

Ապրիլի 24-ին, հինգշաբթի.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի (Տես առանձին):

*
* *

Ապրիլի 27-ին, կիրակի.—Տօն Երևման Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես եպս. Պոլապայանը:

«Հայր մեր»-ից առաջ սրբազան հայրը օրվա խորհրդի մասին ոգեշունչ և իմաստնալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: